

Սարսե

# Ապաճառ Յեղանկություն



891.99  
U-26

12 MAR 2011

ԽՈՏ ԳԱՐ ՏԵ

891.99  
0-26 *այ*

ՍԱՐՄԵՆ

ՀԱՅ ԱՐ

Դ.Վ.ԱՃՎԱԾ  
ՅԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ



1937

0101  
ՀՀՀՀՀՀ

ՊԵՏՎՐԱԾ  
ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ  

---

ՅԵՐԵՎԱՆ

1937

29 JUL 2013

53752

## ՌԱԶԻՅԵ ԶՆԴԻ

(Պ Ա Ե Մ )

Մի գեղածիծաղ, աստղալի գիշեր,  
Հեռավոր, անհայտ, մոռացված գյուղում,  
Խաչնարած Զնդու հինավուրց հյուղում  
Լովեցին լացող նորածնի ճիչեր,  
Ու աշխարհ յեկավ մի սեվաչ մանկիկ,  
Վոր այս պոեմիս հերոսը դարձավ,  
Ու մաքառումով կյանքի հատակից  
Լերան կատարը յելավ—բարձրացավ,  
Վոր խիզախորեն իր նավը մղեց  
Հնդդեմ փոթորկի, ալեկոծության,  
Վոր... սակայն լսեք վիշտն ու խինդը մեծ  
իմ այս տողերի նվազածության...

Խաչնարած Զնդու անշուք կարճիթում  
Ծնվեց մի տղա, անունը Ռաջի:  
Այն Զնդին ուներ մի շուն, մի կատու,  
Մի քանի վոչխար, մի սիրուն աղջիկ.  
Այն Զնդին ուներ մի հոգեզմայլ,  
Զնաշխարհիկ կին՝ անունը Զոզան.



1010  
42924

Այն Զնդին ուներ մի ալեզարդ մայր  
Ու մի պառավ տատ՝ անունը Սայրան:  
Լեռների լանջին, ժայռի սովորում  
Մի արտ ել ուներ այդ հովիվ Զնդին.  
Ո՛, նա ուրիշ չութով եր վարում  
Այդ հողամասը՝ ուժատ, անջրդի:

Հովիվ եր Զնդին հիսուն տաքեկան,  
Սակայն մազերում վոչ մի ճերմակ թել,  
Մանուկ որերից այդ պարթե հսկան  
Լոկ փրփրացող թարմ կաթ եր կթել,  
Ծծել լեռնային ողը կենսարեր,  
Աղբյուրի ջուր եր ըմպել անհագուրդ,  
Ծաղկի բույրով եր մեծացել, արբել  
Այդ ծեր—ջահելը, այդ հովիվը քուրդ:  
Իր չորան հորից ժառանգել եր նա  
Նամուս, քաջություն, հյուրասիրություն.  
Վոչ վոք չեր կարող չարաչք մոտենալ.—  
Զնդին իր հոտին հսկում եր արթուն...

Ահա այն որը, յերբ ծնվեց Ռաջին,  
Նստել եր Զնդին սառ աղբյուրի քով,  
Ականջ եր դնում ջրի կարկաչին,  
Հիանում կապույտ—կապույտ յերկնքով...  
Հոտը փովել եր ծով կանաչի մեջ,  
Այծերն եյին լոկ թառել ժայռերին,  
Բոկ Զնդու կողքին նստել եր մի մեծ,  
Հաստավիդ գամփո՛ խիստ ու ահոելի:

Զնդու աչքերը հոնքերի տակից  
Բոցկլտում եյին՝ ինչպես զույգ խարույկ,  
Բարձրանում եյին մտքի հատակից  
Հուշեր սրբազան ու հավետ առույգ:

Յեկ հաջորդ որը Զնդուն լուր բերին,  
— Զոգանը ծնեց մի թխլիկ տղա:  
Ինչպես յերաշտից խանձված արտերին  
Հանկարծ կենսատու հորդ անձրև տեղար,  
Այնպես ել Ռաջու ծննդյան լուրից  
Զերմ ջահելությամբ հուրհուրաց Զնդին...  
Ո՛, տղան վոր կա՝ ուրիշ ե, ուրիշ,  
Հովիվն սիրում ե տղա հաջորդին:

Ռաջին ել բռնեց պապերի ուղին՝  
Մանուկ հասակից գարձավ գառնարած,  
Ու սար եր տանում գառները գյուղի  
Արևածագից շա՞տ ու շատ առաջ:  
Յեկ, ամբողջ տարին բորիկ, կիսամերկ՝  
Իր գառների հետ շրջում եր Ռաջին,  
Անուշ յերգում եր սրտառուչ մի յերգ  
Բարձրաբերձ ու զով լեռների լանջին.  
Մեծանում եր նա սարերի գրկում  
Իր պապերի պես՝ բնության գերի,

Յեվ նրանց նման «լոյս» եր յերգում,  
Յերանի՛ տալիս յերկնի հավքերին:

Նախանձում եր նա և բուռըն ատում  
Թե՛ բեկ Բըրոյին, թե՛ ուս Մուրադին.  
Բըրոն հարուստ եր, հզոր, մեծատուն,  
Իսկ ի՞նչ եր այս խեղճ խաշնարած Զնդին...  
Բըրոյի տղի շորերը շքեղ,  
Կողքին կապում եր արծաթապատ սուր,  
Ել ինչո՞վ ասես իրեն չեր զուգել.  
Այդ չեչոտ Զայդոն՝ ցուրտ, մահասարսուռ.  
Ինչե՛ր չեր անում այդ փոքրիկ աղան,—  
Կարդում եր գրքեր անծանոթ լեզվով.  
Թեկուզ վողջ գյուղը հաներ կախաղան՝  
Նրա կամքի դեմ ո՞վ դուրս կդար, ո՞վ...

Ուաջին հաճախ եր նստում քարափին,  
Անդունդին հառում աչքերը թախծոտ,  
Նայում վոլորուն գետակի ճամբին,  
Ջրերին վճիտ, հավքերին անցորդ,  
Հաճախ տարվում եր վառ յերազներով,  
Ողում կառուցում չքնաղ դղյակներ,  
Ու վորս—յերազի հետքից վազելով՝  
Քիչ եր մնում՝ խոր հեղեղատն ընկներ...  
Յերբ սթափվում եր յերազուն Ռաջին,  
Տեսնում եր նորից նույն լեռները լերկ,  
Ու այդ ահալի լեռների լանջին՝  
Թախծալի լացող սրինդների յերգ...

Բնության ծոցում աճում եր Ռաջին  
Ու կոկոնում եր, վորպես վայրի վարդ,  
Յերբ պատերազմը՝ անդութ, ահածին՝  
Արյունով ներկեց ձոր, անտառ ու արտ,  
Յերբ տիփը հրեշ, սովուն անազորույն  
Մահվան մատնեցին յերկիրը համայն,  
Յերբ մարդը մարդուն մորթում եր, մաշկում,  
Նույնիսկ մի պատառ չոր հացի համար,  
Յերբ ամայացավ գյուղը վշտահեծ,  
Ու ել հոտերը սար չբարձրացան,  
Յերբ աղջիկները ու հարսները հեզ  
Մի մեծ, վիթխարի վշտից համբացան...

Սոսկալի սովու՝ մի համաճարակ,  
Աշխարհակործան հիվանդության հետ  
Ներս մտավ նաև մի խարիսուլ տնակ,  
Ուր հառաջում եր պառավն ալեհեր,  
Ուր մանուկները հաց եյին հայցում,  
Ուր տնքում եր մի հաղթանամ չորան,  
Ուր մայրը գրկած գառնարած Ռաջուն՝  
Լացով հիշում եր հին կյանքի ճամբան...  
Ու որեր անցան... հյուղում մնացին  
Լոկ Ռաջին վորբուկ ու իբ գորշ կատուն-  
Բոլորը մեռան, անդարձ գնացին,  
Իսկ տրտում Ռաջին մտավ մանկատուն:

Այդ մանկատունը խարիսխ եր դցել  
Հին Գյումրու բերդից հաղար քայլ հեռու.  
Դիմացը՝ վսեմ Արագածը ծեր,

Իսկ ինքը՝ առջոր, վոչ ծառ, վոչ առու.  
 Դա մի ինքնիշխան փոքրիկ քաղաք եր  
 իր որենքնիերին, տերերով, բանտով.  
 Կարծես այդտեղ եր յեկել, հավաքվել  
 Մի պարտված բանակ՝ վողջ ապարատով:  
 Վեհանիստ չենքեր, սև, մոռայլադեմ,  
 Նրանք նման չեն Զնդու Կորմիթին.  
 Քմահաճ բախտի նժույգը նստել,  
 Պալա՛տ ե յեկել Ռաջիյե Զնդին...

Պալա՛տ, ի՞նչ պալատ այդ անհույս  
 Ճմռան...

Հին գորանոցներ՝ մոայլ, անժպիտ.  
 Վերից վար չափեց ու տնդղեց նրան  
 Կառավարիչը և՛ դաժան, և՛ բիրտ.  
 Նրա նայվածքը խոցող եր ու չար,  
 Զեռքին բոնում եր միշտ դալար ճիպոտ,  
 Հին խմբապետ եր յեղել անպատճառ,  
 Այդ եր վկայում կզակը ճարպոտ.  
 Նրա հայացքից սարսուած, սոսկաց,  
 Կարծես փոքրացավ, կծկվեց Ռաջին,  
 Իր սրտում ցավի դառն կսկիծ զզաց,  
 Բայց լուռ պատվարեց գետակը լացի:

Ռաջին մենակ չե. դալիս են ահա  
 Նրա պես ուժատ, նորանոր փորբեր,  
 Գալիս են անվերջ հիվանդ, սովահար,  
 Աչքերում՝ սարսափ, շրմներին՝ վողբեր

Գալիս են նրանք դաշտերից խոպան,  
 Քաղաքից ավեր, գյուղից ահավոր...  
 Մեկի պապերը յեղել են չորան,  
 Մեկին՝ հողագործ, մեկինը՝ բանվոր.  
 Վշտերով և՛ մեծ, և բազմահազար,—  
 Գալիս, թափվում են մեկ-մեկի գլխին.  
 Հյուծված են նրանք, սկսում են հազար,  
 Այտերը՝ աշնան տերեւներ գեղին:

Ծեծն եր այդ բանտի ամենահզոր  
 Դաստիարակը՝ «անհիշաչար մայր»—  
 Ու ահա մի որ, աշնան լալկան որ,  
 (Այդ հուշը, Ռաջին միշտ կպահի վառ),  
 Մի ինչ վոր անմեղ չարության համար  
 Եիլաշք Յեգորը, «սաստեց» Թաթուլին.  
 Չողը բարձրացավ, թափով իջավ վար  
 Ուղիղ Թաթուլի վտիտ արմունկին.  
 Ճչաց Թաթուլը, գալարվեց, մարեց,  
 Իսկ այդ «դաստիարակ» Յեգորը գոռաց.  
 — Դեհ, վերցրեք սրան, չո՛ւտ հիվանդանոց...  
 Ու ինքը անփույթ սուլելով գնաց...

Շաբաթներ անցան: Թաթուլը յեկալ,  
 Բայց լոկ մի թև կար նրա ուսերին...  
 Աչքերում վառվող կրակը չկար,—  
 Ծերության ձյունն եր իջել հույզերին.  
 Ել չել թույուն Թաթուլը աշխույժ,  
 Նա խույս եր տալիս մարդկանց հայացքից,

Թախիծ եր իջել աչքերին խաժուժ,  
Սրտին՝ տիրամած ու դառնակսկիծ:  
Մի ուրիշ մանկիկ՝ անունը Արամ,  
Մստր Հոթորի ծեծի տակն ընկավ.  
Արամին վերցրին, ուշաթափ տարան,  
Ու նա յել յերբեք, յերբեք հետ չեկավ...

Վորպես մի հմուտ, «կլասիկ» ծեծող՝  
Հոչակ եր հանել կնուտ Արտաշը.  
Ծեծում են անհագ այդ արյուն ծծող,  
Այդ հանրածանոթ պարոն անտաշը.  
Մանկատներում չկար մի վորբուկ,  
Վոր այդ կնուտից խույս տված լիներ...  
Գալիս եր հանկարծ՝ ինչպես ձմռան բուք՝  
Մուայլ ճակատին. կնճիռի լեռներ.  
Կնուտ Արտաշին ո՞վ չեր ճանաչում,  
Ո՞վ չեր ճանաչում ժանդոտ դահիճին:  
«Բարերարների» ինքնիշխան վորջում  
Դեռ ինչե՛ր, ինչե՛ր պիտ տեսներ Ռաջին...

Ռաջին այդ անսեր, այդ մուայլ բանտում  
Ապրում եր վորպես թևաբեկ կաքավ.  
Ի՞նչ դուրեկան եր ջինջ, վճիտ ողում  
Շվի ածելով հոտի հետ ման դալ...  
Արհամարհում եր, ատում եր Ռաջուն  
Կառավարիչը՝ «ազդային փրկիչ»:  
Ռաջին հաճախ եր խորունկ հառաչում,  
Մորմորում տիսուր ու դառնակսկիծ.  
Թախծոտ եր Ռաջին, անսահման թախծոտ,

Զեր գտնում ազիզ, սրտակից ընկեր.  
Վորպես մի ստար, մոլորված անցորդ՝  
Այդ ի՞նչ խորթ, անդութ աշխարհ եր ընկել...  
Ռաջին չդիտեր հայերեն խոսել,  
Լոկ թոթովում եր մի կամ յերկու բառ.  
Իսկ քրդերե՞նը... արյուն կհոսեր՝  
Թե հանկարծ հնչվեր միամբտարար.  
«Պետք ե մոռանալ թշնամու լեզուն,  
Քաջ կորյուն դառնալ հայ դատի համար,  
Մեծ ե մեր ցեղը, ցեղը Հայկազուն,  
Մեր ճամբից բացի՝ վոչ մի ճանապարհ».  
Այսպես եր ասում վարժապետ Արան,  
Այդ եր քարոզում Նշան պատվելին,  
Զե՞ վոր այդպես եր տվել հրաման  
«Ամենակարող» կեսարը վերին:

Փոքրիկ հովիվը պապանձվեց, լոեց,  
Համբացավ՝ ինչպես մի սառած առվակ,  
Ազատ ժամերին տիսուր, վշտահեծ,  
Մենակ թառելով պատի, թմբի տակ  
Կամ մտնելով խուլ, ամայի անկյուն՝  
Մտքերի ծովն եր ընկղմվում Ռաջին,  
Հիշում եր լեռներ, վտակ ու աղբյուր  
Հիշում եր նույնիսկ իրենց չալ այծին,  
Հիշում եր մորը, տպտին, քույրերին,,  
Հիշում եր հորը՝ բարեսիրտ հովիվ,  
Ի՞նչ կարոտով եր հիշում դառներին,  
Շվիի յերդը իրիկլա հովին:

Թաջին մենակ չեր. նրա պես այնքա՞ն,  
 Այնքա՞ն մանուկներ կային այդ բանտում.  
 Ու ահա մի որ, վորպես բարեկամ՝  
 Մտերմանում են Ռաջին ու Աթոն.  
 Ինչ վոր մանկական չարության համար  
 Նրանց բռնեցին, բերին մանկատուն:  
 Մթնում եր արդեն, ցուրտ եր ու խավար...  
 Բուքը վոռնում եր, իրեն կտրատում.  
 Այդ ցուրտ գիշերին նրանք յերկուսով  
 Կրում եյին մի սոսկալի պատիժ,—  
 Նրանց տանջում եր դաղված յերեսով  
 Որիորդ Սանդուխտը՝ անապատի իժ:

Սալահատակին ավազ եր փոված,  
 Ավազի վրա՝ ծնկաչոք ու մերկ՝  
 Աթոն ու Ռաջին. ճիպուր բռնած՝  
 Հսկում եր Հայրոն, այդ ստրուկը հետ:  
 Նրանք խոր ցավից դալարվում եյին,  
 Բայց չեյին լալիս՝ չգիտեմ ինչու,  
 Թեև պղտորվում, մշուշվում եյին  
 Վճիտ աչքերը գառնարած Ռաջու.  
 Իսկ Աթոն՝ այդ ժիր, այդ ըմբոստ տղան,  
 Վոր շատ եր կրել այդպիսի պատիժ,  
 Խոհուն աչքերը — վառ ու հուրհուրան  
 Չեր հեռացնում գիմացի պատից:

Այդ գանթեական դժոխքում, սակայն,  
 Չընկճվեց Ռաջու հուսավառ հոգին.  
 Զանքերով համառ ու հերոսական

Տիրապետեց նա գիտության զենքին.  
 Սովորեց կարդալ: Կարձ ժամանակում  
 Ընտելացավ նա հայերեն լեզվին:  
 Յերկար գիշերներ նստելով անքուն՝  
 Գալիքի համար սրում եր սվին.  
 Անվերջ կարդում եր մատչելի գրքեր,  
 «Գիքորը» գիտեր համարյա անգիր,  
 Համով յերգում եր գեղջկական յերգեր,  
 Պատմում հեքիաթներ— վառ, հետաքրքիր:

Մի որ ել Ռաջին, յերբ մենակ նստած՝  
 Որորում եր իր հուշերը աննինջ,  
 Նկատեց մի բան, վորից և'սոսկաց,  
 Յեկ աշքին մթնեց ամեն, ամեն ինչ...  
 Խոնավ նկուղից դուրս բերին մեկին՝  
 Վոտքերին շղթա, ձեռքին ծանր ուռնդ...  
 Ինչպես վոր ծովը հովվի, մըրկվի՝  
 Ալեկոծվեց մեր գառնարածը քուրդ.  
 Շղթայակապը՝ նրա սիրելի,  
 Մտերիմ ընկեր անվախ Աթոն եր.  
 Ռաջին մղկտաց, բայց բանտարկյալի՝  
 Աթոյի համար կարծես մեծ տոն եր:

Վերից նայում եր ամռան բորբ արփին  
 Անթիվ աչքերով, և' այրող, և' վառ:  
 Աթոն մոտեցավ մի հողաթմբի,  
 Շղթային կապած գունդը գցեց վար,  
 Քլունգը վերցրեց, սկսեց փորփրել  
 Ժանդուտ շղթայի զրնդոցի տակ...

Հեռվում նստել եր, բեխերն վոլորել  
Մի հին կամավոր, մի «կտրիճ» պահակ:  
Ռաջին շտապեց դեպի մանկատուն,  
Ոգնելու համար թակարդն ընկածին,  
Յերբ ինչպես ցնծում ավետող ձայներ՝  
Ճաշն ազդարարող զանգերն զնդացին:

Ռաջին շտապեց դեպի մանկատուն,  
Հերհեվ, արագ մտավ ճաշարան.  
Ճաշը կուլ տվեց մի ակնթարթում,  
Հացը գրպանեց, թափով դուրս թռավ...  
Զննիչ, խորամանկ չորս կողմը նայեց,  
Հետո սլացավ դեպ գերված Աթոն:  
Աթոն փորում եր, աշխատում անվերջ,  
Իսկ պահակը դեռ հսկում եր արթուն.  
Կիսաքաղց Ռաջին աննկատ, զգույշ  
Հեռվից իր հացը նետեց Աթոյին,  
Իսկ ինքը հապճեպ, ճկուն, կուզեկուզ  
Ծլկեց՝ ինչպես այծյամն լեռնային...

Այսպես եր Ռաջին, յերբ մեր արնաքամ,  
Ավեր աշխարհում բռնկվեց մի այդ...  
Այդ— ինչպես մարտի փողփողուն վահան  
Վեր բարձրացրեց մի նոր դասակարդ,  
Այդ, վոր բորբոքվեց աշնան առավոտ,  
Նոյեմբերյան ցուրտ, ամպամած մի որ,  
Արդ վոր այնքան ջերմ, այնքան փառավոր  
Մեր հողը գրկեց՝ ինչպես քնքուշ մոր...  
Այդ, վոր վողողեց մեր լեռները սեդ.

Մեր ձորերը խոր, մեր սրտերը բաց,  
Այդ, վորի լույսով յեղերքից յեղերք  
Լցվեց յերկիրը ու խինդով ծփաց...

Ո՛, ինչ ցնծությամբ վողջունեց Ռաջին  
Այդ այդաբացը վառ, գարնանաբեր,  
Մեր պայծառ կյանքի այդ որն առաջին  
Նրա դեմ բացեց դյությական ափեր,  
Սակայն մանկատան կարգերը դարձան  
Ավելի մոայլ, ավելի ճնշիչ.  
Ո՛, մստրները բռնությամբ դաժան  
Բանտել ուղեցին մեր գալիքը ջինջ:  
Ցանցեյին բանտը յերկաթալարով,  
Բոլոր կողմերում պահակներ դրին,  
Վոր մանուկները անտես թելերով  
Չկապվեն կարմիր, կարմիր սրտերին...

Որական ուղիղ տասներկու անգամ  
Պետք ե աղոթեր մեր վորբուկ Ռաջին,  
Առավոտ կանուխ յերգով բարձրածայն  
Փառք ու պատիվ տար յերկնի արարչին.  
Նախքան թեյն՝ աղոթք, խմեցիր՝ աղոթք,  
Նույնպիսի կարգով ճաշին, ընթրիքին,  
Քնելուց առաջ՝ ծնկաչոք աղոթք,  
Ու այդպես անվերջ կրկին ու կրկին.  
Իսկ կիրակի օր կուզիկ քահանան  
Շուրջով մտնում եր նոր յեկեղեցին,  
Ազգի սուրբերին գովում անսահման,  
Յերանի՛ տալիս «վոսկի անցածին»...

Բայց աշնանային մի խավար գիշեր,  
Յերբ ամպը ծածկեց և՝ աստղը, և՝ լուսին,  
Յերբ քամին ճիշով սկսեց դուժել  
Դռները ծեծող ձմեռվա մասին,  
Յերբ խորասուզված կարդում եր Ռաջին,  
Ու բանառում լոեց, մարեց ամեն ինչ,  
Սեդ Աթոները կազմակերպեցին  
Մի ընդհատակյա, կոմյերիտ բջիջ.  
Այդ խիզախների բջիջն անդադրում  
Իր ծոցն եր առնում նորանոր մարդկանց,  
Ու գարնանային քչքչան առուն  
Դառնում եր մի գետ՝ խոր, արագընթաց...

Ռաջին ընդունվեց այդ բմբոստացած  
Պատանիների քաջարի դնդում.  
Գլխարկը հանեց, կանզնեց խոնարհած,  
Բջիջին տվեց սրբազան յերդում.  
Նա յերդվեց լինել միշտ առաջապահ,  
Յերբեք խուճապով հետ չնահանջել,  
Լավ որվա համար հարթել ճանապարհ,  
Յեվ բիրտ թշնամու սրտին հարվածել.  
Ու մստրների, խմբապետների,  
Բյուր լրտեսների այդ վորջում խավար՝  
Վառվեց, բորբոքվեց մահու և կյանքի  
Մի հրաբորոք, անխնա պայքար...

Նոր թեր առած՝ խանդավառ Ռաջին  
Ղեկավարում և պիոներ մի ողակ,  
Այդ ժանտատեսիլ խավարում ճղճիմ՝

Հույսի, լույսերի հորձանուտ կոհակ:  
Խորունկ ովշեր ե: Յուրաք սառնամանիք:  
Վերադառնում ե Ռաջին քաղաքից.  
Վերից նայում ե մի լուսնի մահիկ,  
Հեռվում՝ ստվերը անքուն պահակի:  
Նա բանտն ե բերում բոցաշունչ գրքեր,  
Նորաստեղծ յերգեր—հեղափոխական,  
Ել վոչ մի Կոռուտ, պահակ կամ մստր  
Զեր կարող մարել վառվող ապադան:

Հաճախ պատերին, դռներին բոլոր  
Փակցվում եյին մարտաշունչ կոչեք,  
Չեռագիր թերթեր՝ ահալի, բոցոտ,  
Վոր տալիս եյին խոր, անրուժ խոցեր...  
Ու խոցում եյին՝ դահիճ Սանդուխտին.  
Նշան պատվելուն՝ կեղծ—հեղահամ բույր,  
Փետրահան անում և՝ խմբապետին,  
Յե՛վ մստրներին—կուշտ ու հաստափոր.  
Սուր ծաղրում եյին սողացողներին,  
Քամելիոններին՝ յերկերեսանի,  
Ու այդ բոլորին պինդ գամում եյին  
Խայտառակության զագրելի սյունին:

Մստր Ոգդենը՝ իսկական աղվես,  
Անսահման «բարի», «մարդասեր» ու «հեզ»:  
Վարպետ հետախույզ այդ ամերկացին,  
Առավոտ կանուխ նստում եր գորշ ձին,  
Ծայրից ծայր շրջում բանտն այդ ալեկոծ,  
Հրամայում եր վորբերին գրել,

Պատերից պոկում թռուցիկ ու կոչ,  
Մուայլվում՝ ինչպես փոխորկոտ ձմեռ...  
Հետո կանչում եր, քննում, բանտարկում,  
Ընդմիշտ աքսորում այդ «դրախտ» վորջից.  
Բայց ընդհատակում հրդեհ եր վառում  
Պատանեկական մի խիզախ բջիջ...

Ու որեր անցան: Բյուր շինարար ձեռք  
Բուժեց մեր յերկրի վերքերը անհուն.  
Ամեն կողմ հնչեց ուրախության յերգ.  
Խայտաց, կարկաչեց ծիծաղի առուն:  
Հին յերդիկները նորից ծխացին,  
Դաշտը հերկեցին գութաններ լայն-խոփ,  
Ու սար բարձրացավ հովիվ գյուղացին՝  
Սրտում ցնծություն—ովկիանի պես խոր:  
Շոգեկառքերը ազատ փնչացին,  
Անուշ զնդացին ուելսերը զվարթ,  
Ու շչակները ուրախ ճչացին,—  
Խինդով լցվեցին ձոր, անտառ ու արտ:  
  
Կարիքը քիչ-քիչ դիրքերը զիջեց,  
Մանկատները մնացին թափուր,  
Յերկերը իրեն զրահով զինեց,  
Վարարեց, փրփրաց մեր զինին պուր-պուր:  
Ու Ռաջին գարնան մի արևոտ որ  
Հրաժեշտ տվավ իր «դրախտ» բանտին,  
Հետը տանելով մի քանի հատոր,  
Մի աղջկա նկար՝ ամենից անդին...  
Նոր հայրենիքը ընդունեց Ռաջուն

Ինչպես հարադատ մայրը զավակին,  
Նրա դեմ բացեց անօահման ջանքի,  
Բուռն աշխատանքի դաշտը հարածուն...

Վոսկեվարս աշնան մի պարզ առավոտ  
Մեր Ռաջին մտավ համալըսարան.  
Ճամբան դժվար եր, անհարթ, անծանոթ,  
Դեռ շատ հեռու յեր կատարը լեռան:  
Եր սբուռմ հույսի ծաղկիներ պուր-պուր,  
Զեռքին՝ լենինյան անհանդչելի ջահ,  
Վառեց մաքառման վողեռիչ հուր,  
Բոնեց վերելքի ուղին տքնաջան:  
Դրոհի յելավ դիտության համար,  
Դիրք դիրքի վրա տիրեց, դրավեց:  
Մի որ ել Ռաջին խնդությամբ անմար՝  
Բարձրադույն ուսման ընթացքն ավարտեց:

Մայլես այն չե դարավոր հովիվ,  
Այս աշխատավոր ժողովուրդը քուրդ,  
Լույսով ե լցնում ե' ձոր, և հովիտ,  
Յել միտք, և' հողի, և' խրճիթը մութ:  
Յելել ե կովի, ցրում ե ամպեր,  
Ամպեր խավարի, կրոնի զազիր,  
Նա բախտը վաղուց, վաղուց ե կապել  
Մեր մեծ Միության դաշտերին անծիր,  
Ծովերին կապույտ, մեծ սրտին անսաստ,  
Գործարաններին վիթխարահսկա,  
Ու նա ապրում ե իր յերիտասարդ  
Վերելքը հուր-հուր ու հերոսական...

Յեռանդ ե Ռաջին, անհատնում յեռանդ,  
 Պատմաբան ե նա և լսվ թարգմանիւ,  
 Ունի նորածիլ պոետի տաղանդ,  
 Աչքեր՝ շողշողուն գալիքի պես ջինջ:  
 Ու գեշեր-ցերեկ համառ, անտրտունջ  
 Այրվում ե Ռաջին, գրում, թարգմանում,  
 Ստեղծում ե նոր, հյութեղ, լիաշունչ  
 Յերգեր, պոեմներ, գրքեր բազմանուն...  
 Ուսուցիչ ե նա: Բոցավառ ջահեր,  
 Նոր մարտիկներ ե տալիս քուրդ գյուղին.  
 Յեկ այսպես՝ Ռաջին դեռ այնքան ջահեր՝  
 Անցնում ե իր մեծ, փառավոր ուղին...  
 . . . . .

Իմ այս տողերը գրելու ժամին  
 Ռաջին նստել ե սեղանի առաջ.  
 Դրսում յերգում ե բաքչունչ քամին,  
 Քամին սանձաբճակ ու դառնահառաչ:  
 Քաջին կարդում ե «Ֆառւստ»—ի մասին  
 Հետազոտական մի ստվար հատոր.  
 Դրսում պարում ե ձմռան ցուրտ քամին,  
 Ներսում անսահման խաղաղ ե, անդորր:  
 Ռաջին կարդում ե, ընդգծում, գրում...  
 «Գիքոր»—ից՝ «Ֆառւստ», Հովվից՝  
 գիտնական...

Ո՞, մեր լայնաբճակ, յերջանիկ յերկրում  
 Հերոս Ռաջիներ ինչքա՞ն, ինչքա՞ն կան...

---

## ԱՊԱԳԱՆ

Յես ու Լաթիֆան—խաժակ քրդուհին,  
 Մի հանրահոչակ ճարտարապետ,  
 Ճեծած սև ձիեր, ձիերն ամեհի,  
 Կարում անցնում ենք սար, ձոր ու գետ.  
 Ուղին դարիվլեր, վոլորապտույտ,  
 Ժայռերի շուքն ե ընկել վրան,  
 Դիմացից դեպի յերկինքը կապույտ  
 Հասակն ե ցցվում խրոխատ լերան:  
 Գարնան գիշեր ե ցոլում ե վերից  
 Լուսինը՝ վորպես հսկա գոհար,  
 Կայծեր են ցայտում սուր հարվածներից  
 Խճաքարերը սմբակահար:

Հանդարտ գնում ենք Ստալինաբաղ,  
 Հայրենի գյուղը ընկերուհուս,  
 Լաթիֆան այնպես հուրհուրան, հպարտ  
 Յերգում ե վծիտ ու սրտահույզ:  
 Յերգում ե նա նոր քրդական մի յերդ՝  
 Յեկ բազմահնչյուն, և հորդաբուղին.  
 Ո՞, այդ յերգում կա ցնծաղին վերելք,  
 Նոր մարդ, նոր աշխարհ, նոր կյանք, նոր  
 գյուղ:

Ո՛, այդ յերգում կա արևելյան բույր,  
Ու վեհությունը մեր լեռների.

Սրտի ակունքից վորպես ջինջ աղբյուր՝  
Պոռթկում ե ուրախ կարկաչով լի...

Վառ գեղեցկությամբ մի լիալուսին  
Լողում ե յերկնի կապույտի մեջ,  
Յեվ նա հանդարտվում ու կարդում ե ինձ  
Իր կյանքի զրբից մի դյութիչ եջ:  
Նա պատմում ե ինձ, ինչպես մի դիշեր,  
Յերբ հողմն եր թակում դոները փակ,  
Յերբ մարել ելին ճրագի լույսեր,  
Ներսում վառվում եր բուխարին բարկ,  
Ինչպես այդ գիշեր յերազուն նստած՝  
Պատկերել ե նա նախագծեր,  
Յեվ առավոտյան լույսը չբացված՝  
Նոր գյուղի հիմքն ե հաստատ գցել...

Ու հիմա այնտեղ, ուր կուտակվում են  
Կապար—ամպերը կայծակնածին,  
Ուր շղթան փշրած բքաշունչ քամին  
Թռչում ե ինչպես մոլեզնած ձի,  
Յեվ ուր գետերը իրենց սլացքին  
Վերահաս ցրտից համբանում են,  
Ուր ծաղիկների գորգերովն անգին  
Լեռները դարնան պճնվում են,  
Այնտեղ ընկած ե նորաշեն մի գյուղ՝  
Ենքերով շողուն ու բազմահարկ:

Յերբ նոր եր շիկնում արմը ծագող,  
Ընկերուհուս հետ գյուղն այդ հասանք...

Ահա կանգնել ենք մի գեղածիծաղ,  
Լուսալի շենքի բուրիչ բակում  
Մեր գլխի վերև մի հոյակապ ծառ  
Իր ճյուղերի տակ բակն ե ծածկում:  
Ենքից դուրս գալով՝ մտտենում ե մեզ  
Ալեւեր, ժպտուն մի ուսուցիչ,  
Զեռքս սեղմում ե հին ծանոթի պես՝  
Յեւ զերմաղգաց, և' սիրալից:  
Ու մենք միասին անուշ զրույցով  
Շրջում ենք բակումն այդ լայնարձակ,  
Չորս կողմը բուրմունք, ծաղիկների ծով,  
Իսկ ծաղկի ծովում—մի վեհ արձան:

Մինչ մենք շրջում ենք՝ հնչում ե զանգը,  
Ու զուրս ե թափլում խինդի հորձանք.  
Միրտս կապում ե, ինչպես յերկինքը,  
Գարնան գունագեղ մի ծիածան:  
Բակը նախշում են այնքան մանուկներ,  
Վառ պատանիներ—ուշիմ ու կիրթ,  
Նրանց սրտերում—կյանքի խարույկներ—  
Աչքերը շողուն՝ ինչպես հակինթ:  
Իզուր չի կորչում և վոչ մի վայկյան,  
Մկավում ե ահա ձկուն մարզանք...  
Կոլեկտիվ վողի, և կոլեկտիվ կյանք,  
Արևոտ աչքեր, սրտի հուզանք:

Ներկա յենք լինում մենք Արևելքի  
 Գրականության ուսուցչի դասին.  
 Դասատու Միբղան վառ, հետաքրքիր  
 Մեկնաբանում ե մեծ միրդուսին:  
 Մայրենի լեզվով կարդում են նրանք  
 Հատվածներ, յերգեր «Շահնամե»—յից,  
 Ու վորպես զուլալ լեռնային վտակ  
 Հոսում ե խոսքը ակունքներից:  
 Յեվ Հայնեյին են յերբեմն հիշում,  
 Քաղվածքներ բերում Հոմերոսից  
 Ո՛, այս գեմքերը աստեղանախշուն  
 Յերկինքների պես գերում են ինձ:

Ուր վոր նայում ենք՝ մաքուր ե ու ջինջ,  
 Դասարաններում՝ լույսերն առատ,  
 Ու ներս են նայում պատուհաններից  
 Մեր վեհ լեռները անտառապատ:  
 Մեզ առաջնորդող սեաչ քրդուհին,  
 Վոր քիմիկոս ե այս դպրոցում,  
 Առաջարկում ե այցելել մի հին,  
 Հարուստ թանգարան—հին ամբոցիւմ:  
 Յերկնակամարում վոչ մի ամպի բիծ,  
 Կապտավուն ծովն ե վառվում—անբոց,  
 Յեվ մենք դուրս դալով դպրոցի բակից,  
 Ուղեվորվում ենք գեպի ամբոց:

Գյուղի թանգարանն հոյակապ մի շենք՝  
 Ընկել ե բլբի ստորոտում.

Յես ու ընկերոս դանդաղ քայլում ենք՝  
 Մերթ մտամոլոր ու մերթ ժպտուն:  
 Լեռների վրա մեր այս բարձրաբերձ  
 Գարունն ե փթթում խոր խնդությամբ:  
 Ու արշալույսն ե բոցկլտում անբիծ  
 Գույների, շողքի առատությամբ:  
 Յեվ բորբոքվում ե սիրտը արեի,  
 Վորպես յերկաթի հսկա հալոցք,  
 Կարծես թե մեկը կապույտ վերեկից  
 Վոսկե շողեր ե թափում խուրձ—խուրձ:  
 Պատմում ե նա ինձ այրող հուզումով՝  
 Սիամանթոյի սիրո մասին,—  
 Խաջեյին սիրել ու մաքառումով  
 Հաղթել ե գոռող ել Աղասուն  
 Մեռակ կռվել ե նա տերերի գեմ,  
 Բնչազուրկ, անհող, այդ սեդ տղան,  
 Անվրեպ նետով փշրել ե, ջարդել  
 Իշխանազուններ, բեդ ու աղա,  
 Ու բարձրացել ե Սիփանա սարին,  
 Վայրի այծերին ընկերացել,  
 Գերի յե դարձել Խաջեյի սերին  
 Այդ կտրիճ տղան— արծըվացեղ:  
 Ո՛, պատմում ե նա մի հերոսավեպ՝  
 Ճորտի գրոհը տերերի գեմ,  
 Պատմում ե սրտանց ու բուրումնավետ՝  
 Ծնչավորելով ամեն մի դեպք:  
 Պատմում ե այսպես հմայիչ վոճով,

Վոր ունի խոսքի այրող դյութանք.  
 Ես տարվել եյի անուշ անրջով,  
 Յերբ թանգարանի խորքը մտանք,  
 Ուր այնպես մոայլ ու տիրաթախիծ  
 Պատկերն ե բացվում մի աշխարհի,  
 Ու տարիների ծանրության տակից  
 Տիուր նայում ե անցյալը հին:

Ահա հին սայլը, արորը ծուռվիզ,  
 Զեթի ճրագը— արցունքոտ աչք.  
 Ու լուծը վզին մի չալճակատ յեզ՝  
 Նայում են, վորպես մտապատրանք:  
 Բայց իմ աչքերը ինչ վոր մի բանի  
 Մեխվեցին հանկարծ նիզակի պես,—  
 Մահակը ձեռքին մի քուրդ չոբանի  
 Նկարն ե կտրել զիգզագ ճամբես...  
 Շորերը մաշված ու խայտաբղետ,  
 Ի՞ոլոզը՝ վորպես ձյունոտ կատար՝  
 Զրուցում են իմ խոհուն մտքի հետ  
 Ու պատկերում են մի անցած դար...

Երջում եմ գյուղը ու խորազնին  
 Դիտում եմ դեմքերը նրբագիծ,  
 Ել չի դայլայլում յեղեղնյա շվին  
 Իր լացող «լոլո»—ն դառնակսկիծ:  
 Ո՛, գարնանային այս լուսաբացին  
 Ժպտացող աչքեր այնքա՞ն, այնքա՞ն.  
 Յերգում են նրանք քուրդ բանաստեղծի

Յերգերը հուզիչ, հերոսական:  
 Նրանց խնդության խենթ հորձանքներում  
 Պայքարի շեշտ կա, վերելքի թափ:  
 Հնչեղ զնզում ե նրանց յերգերում  
 Գալիքը այնպե՞ս պայծառությամբ...

Կոմունար քուրդը մայրենի լեզվով  
 Հոմերն ե կարդում մտասուզված,  
 Ու աղջիկները հաճելի նազով  
 Աշխատանքի մեջ այնպե՞ս թրծված՝  
 Հետո խոսում են համաշխարհային  
 Խնդիրների շուրջ և՛ պարզ, և՛ խոր,—  
 Ո՞ւր են գյուղական ապշությունը հին,  
 Հարսները համբ ու գլխակոր...  
 Նրանք ել չկան, կորել են անհետ,  
 Ինչպես մի մոայլ ամպամած որ,  
 Ու յերբեք, յերբեք ել չեն դառնա հետ  
 Այդ գորշ որերը— տիուր անցորդ:

Ո՞ւր են քրդական վրանաբնակ  
 Հովիվները խեղճ ու վաչկատուն  
 Ել չեն յերեսում, ել չկան նրանք  
 Մեր այս լեռների ստորոտում:  
 Ո՞ւր են, ո՞ւր կանայք— կեղտակուր, անտաշ  
 Յեվ անգրագետ, համբ ու լոին...  
 Նրանք ել չկան, անցել են անդարձ,  
 Ինչպես ձմեռը մեր՝ լեռնային:  
 Ուր են ցեղական վրիժառության

Սրամարտերը արնավարար...  
Յերգիր, Լաթիֆա, յերգիր բարձրաձայն,  
Յերկինքը ջինջ ե, որերը՝ վառ...



4084

Հեղինակ՝ Սարմեն  
Խմբագիր՝ Գ. Սարյան  
Տեխ. խմբ.՝ Լ. Ոհանյան  
Մրբագրիչ՝ Ս. Փարսադանյան

Հրատ. № 4103. Գլավլիտի լիազոր Կ—4595.  
Պատվեր 746. Տիրաժ 2000. Թղթի չափութ  
72×105. Տպագրական  $\pi/8$  մամուլ. Մեկ  
մամուլում 40450 նիշ. Հեղինակային 1 մամուլ:

Պետհրատի տպարան, Լենինի, 65.

ՀՀ Ազգային գրադարան



NL0360511

53752

ԳԻՐԸ 80 4.

САРМЕН  
СТИХИ  
Гиз Арм. ССР, Ереван, 1937 г.